2014 թվականի հունիսի 1-ին
Երեխաների պաշտպանության միջազգային
օրվան նվիրված
միջոցառման ժամանակ
Փաստաբանների երեխաների ներկայացրած
շարադրությունները
***«Ով է փաստաբանը»* թեմայով**

* * * * *

Սիմոնյան Վահե, 7 տարեկան

Իմ հայրիկը փաստաբան է: Նա պաշտպանում է գողերին: Նրա անունը Լիպարիտ է: Նրանք այդպես գումար են վաստակում: Եվ տան համար սնունդ են առնում, մեզ համար շորեր:

* * * * *

Հարությունյան Դավիթ, 14 տարեկան

Փաստաբանը դա մի մարդ է, ով պաշտպանում է մարդկանց շահերը դատարանում: Փաստաբանի աշխատանքը բավականին դժվար է, բայց հատաքրքիր: Փաստաբանը միշտ հետևում է օրենքներին:

* * * * *

Գասպարյան Հարութ, 12 տարեկան

Փաստաբանը դա այն մարդն է, ով օգնում է մարդկանց դատարանում: Փաստաբանները այն մարդիկ են ովքեր շարժվում են օրենքներով:

* * * * *

Հովհաննիսյան Նարեկ, 13 տարեկան

Փաստաբանները պաշտպանում են մարդկանց շահերը, որպեսզի մարդիկ ավելի ապահով ապրեն իրենց երկրում: Փաստաբանների աշխատանքը հաճախ է վեճերի ենթարկվում: Եթե չլինեին փաստաբանները, ապա մեր ժողովուրդը անտեսված կլիներ: Փաստաբանի գործը շատ դժվար է, պետք է փաստաբանը բանիմաց մարդ լինի, որպեսզի հասկանաս բոլորի վիճակը:

* * * * *

Մանուկյան Սարգիս, 12 տարեկան

Փաստաբանը օրենքի մարդ է, ով որ ներկայացնում է և պաշտպանում է մարդկանց իրավունքները դատարանում: Պարտադիր փաստաբանական պալատի անդամ է: Այն մարդն է, ով որ զբաղվում է օրենքով:

* * * * *

Հարությունյան Լուիզա, 11 տարեկան

Փաստաբանը օրենքի մարդ է, որը լուծում է փաստաբանական խնդիրները: Փաստաբանները մասնակցում են դատերի և պաշտպանում են մարդկանց իրավունքները:

* * * * *

Թամրազյան Նոյ, 12 տարեկան

Փաստաբանը օրենքի մարդ է:

* * * * *

Աղաջանյան Աֆինա, 6 տարեկան

Կարապետ փաստաբանը գրում է, փաստաբանը ուտում է, փաստաբանը մայրիկի վրա ջղայնանում է, փաստաբանը կարդում է:

* * * * *

Զոհրաբյան Արսեն, 7 տարեկան

Փաստաբանները մարդկանց իրավունքներն են պաշտպանում: Փաստաբանները միշտ ուշ են գալիս տուն: Ամբողջ օրը աշխատում են և երեխաների հետ քիչ են շփվում:

* * * * *

Մանուկյան Նարե, 8 տարեկան

Փաստաբանը օգնում է մարդկանց: Մեր խնդիրներն է լուծում: Նրանք պայքարում են ի անուն արդարության համար:

* * * * *

Դավթյան Մարիամ, 11 տարեկան

Փաստաբանը մարդու իրավունքները պաշտպանողն է: Նա պաշտպանում և փրկում է մարդուն: Իմ հայրիկը նույնպես փաստաբան է: Նա խորհուրդ է տալիս մարդկանց՝ ասելով, որ պետք է լինել հայրենասեր և բարի: Ես շատ եմ սիրում իմ հայրիկին, որովհետև նա պաշտպանում է մարդկանց:

* * * * *

Ասատրյան Էմիլ, 12 տարեկան

Փաստաբանը մարդկանց իրավունքն է պաշտպանում, և ներկայացնում է դատարանում: Փաստաբանների պալատի անդամ է: Նա կազմում է հայցեր:

* * * * *

Մինասյան Էլեն, 12 տարեկան

Փաստաբանը պաշտպանում է մեղադրյալին, հանցագործին իր արած վատ կամ լավ արարքի համար: Նա այն անձն է, ով պաշտպանում է մարդու խախտված իրավունքները:

* * * * *

Շահբազյան Արփի, 8 տարեկան

Փաստաբանը պաշտպանում է հանցագործին: Նաև փորձում են ազատել դատից: Փաստաբանները մեր պաշտպանն են: Բայց եթե հանցագործությունը մեծ է, ապա փաստաբանը դժվար, թե կարողանա պաշտպանել նրան:

* * * * *

Ավետիսյան Արտյոմ, 11 տարեկան

Փաստաբանը օրենքի մարդ է, նա օգնում է լուծել բոլորի խնդիրները: Փաստաբանը Փաստաբանների պալատի անդամ է: Փաստաբանը այն մարդն է, որը օրենքով է զբաղվում:

* * * * *

Սարգսյան Գևորգ, 7 տարեկան

Իրավաբանները շատ խելացի են և աշխատասեր, նրանք սիրում են իրենց գործը:

* * * * *

Սարգսյան Մարիամ, 9 տարեկան

Փաստաբանները մեր օրերում մեզ շատ են պետք գալիս: Նրանք օգնում են ցանկացած մարդու լուծել խնդիրները: Նրանք շատ խելացի են:
Ես կուզեի այնպես սովորեի. որ մայրիկիս նման դառնայի բարի փաստաբան:
Փաստաբանների գործը շատ դժվար է, բայց դրա հետ մեկ տեղ նրանք աշխատում են ջանասիրաբար:

* * * * *

Արամ Մելքոնյան, 14 տարեկան

Փաստաբանը նա է, ով դատարանում պաշտպանում է մարդու իրավունքները:
Նա պետք է ունենա իրավաբանական կրթություն:

* * * * *

Խաչատրյան Աննա, 10 տարեկան

Փաստաբանը այն է, որ պաշտպանում է մարդու շահերը: Նրա աշխատանքը շատ դժվար է: Նա մինչև վերջ պայքարում է որ մարդը լինի ազատության մեջ:

* * * * *

Բոյաջյան Հարություն, 11 տարեկան

Փաստաբանը նա է, ով արդար է, լավ մարդ, պաշտպանում է մարդկանց իրավունքները:

* * * * *

Մեժլումյան Արման, 8 տարեկան

Փաստաբանը մարդկանց է պաշտպանում և մարդկանց իրավունքներն է պաշտպանում և նա գրում է դատարանում:

* * * * *

Առաքելյան Մարիա

Իմ մայրիկը փաստաբան է: Փոքր ժամանակվանից ինձ հետաքրքրել է այն ամենը, թե ինչ է անում իմ մայրիկը: Ես մեծացա և սկսեցի կարդալ նրա թղթերը, լսել նրա պաշտպանությունները և հասկացա, որ փաստաբանը ամենաարդար և ամենագետ մարդն է: Ես երազում եմ մի օր դառնալ փաստաբան:

* * * * *

Շարինյան Մարիա, 13 տարեկան

Փաստաբանը այն անձն է, որը մեղադրյալին պաշտպանում է իր գործած վատ կամ լավ արարքի համար:

* * * * *

Ասատրյան Էրիկա, 9 տարեկան

Փաստաբանը տպում է հանձնարարություն, կատարում և գրում: Մարդկանց, հիվանդներին օգնում են: Բողոքարկում է հարցերը: Օգնում են բերդի մարդկանց, մանկատան երեխաներին և օգնում են դուրս գալ բերդից:

* * * * *

Մանուկյան Շահանե, 10 տարեկան

Փաստաբանը պաշտպանում է իր հաճախորդի շահերը: Ու դրա համար նրան վարձատրում են: Փաստաբանները պայքարում են հանուն արդարության մարդկանց իրավունքների համար:

* * * * *

Դավթյան Դավիթ, 12 տարեկան

Փաստաբանը այն անձնավորությունն է, որը պաշտպանում է մարդկանց շահերը, օգնում է մարդկանց դուրս գալ ծանր իրավիճակից: Իմ հայրիկը փաստաբան է , նա հետևում է բոլոր օրենքներին և կատարում է այն ամենը, ինչ պետք է կատարի փաստաբանը: Փաստաբանները ուղղակի չեն դառնում: Նախ նրանք պետք է ունենան գիտելիքներ: Նրանք վերականգնում են արդարությունը: Փաստաբանները պետք է հետևեն օրենքին և հետո նոր ներկայացնեն արդարությունը:

* * * * *

Փոստոյան Նարեկ, 12 տարեկան

Փաստաբանը պաշտպանում է մեղադրյալի շահերը: Նա օգնում է մարդկանց և արդարություն է վերականգնում : Փաստաբանը կանխում է անարդարությունը: Նա անում է այն ամենը ինչով կարող է բարելավել հասարակությանը:

* * * * *

Ալիխանյան Սոնա, 11 տարեկան

Իմ հայրիկը փաստաբան է : Նա շատ պարտաճանաչ է և շատ լավ է կատարում իր գործերը: Փաստաբանը պիտի ընդունակ լինի այդ գործը կատարելու և պետք է ունենա նաև նյարդեր: Փաստաբանը պայքարում է մարդու ազատության համար և նա շատ ջանք է գործադրում:

* * * * *

Գրիգորյան Գևորգ, 12 տարեկան

Փաստաբանը օրենքի մարդ է: Նա ներկայացնում է մարդկանց իրավունքները դատարանում: Փաստաբանական պալատի անդամ է, նա ով համոզված օգնում է մարդկանց:

* * * * *

Դավիթ Խաչիկյան, 10 տարեկան

Փաստաբանը մարդուն պետք է նրա համար, որ ներկայացնի վճռող կողմին՝ այսինքն դատարանին, հատուկ փաստաթղթեր և տարբեր իրավական գործեր:
Նաև պաշտպանելու մարդու շահերը:

* * * * *

Մանուկյան Սյուզաննա, 11 տարեկան

Փաստաբանը օգնում է մարդկանց: Իրենց խնդիրներն է լուծում: Իմ մայրիկն էլ է զբաղվում այս գործով: Փաստաբանը պաշտպանում է մարդկանց իրավունքները: Որ ես մեծանամ դառնալու եմ փաստաբան, որ օգնեմ մարդկանց: Ես կպաշտպանեմ իրենց իրավունքները:

* * * * *

Ալիխանյան Արտակ, 9 տարեկան

Իմ հայրիկը փաստաբան է: Ինձ թվում է, որ իմ հայրիկը շատ է չարչարվում, որ մեր ընտանիքը պահի: Փաստաբանը պետք է նյարդեր ունենա, գործից հասկանա, որ բոլոր մարկանց ամեն հարցով օգնի:

* * * * *

Դավթյան Արթուր, 9 տարեկան

Փաստաբանը պաշտպանում է ուրիշի շահերը: Իմ հայրիկը շատ լավ փաստաբան է, նա կարողանում է պաշտպանել ուրիշի շահերը: Փաստաբան դառնալու համար պետք է լավ սովորել, շատ գրքեր կարդալ:

* * * * *

Հարությունյան Վահագն, 10 տարեկան

Փաստաբանը իմ հայրիկն է: Նա դատերին ներկայացնում է մարդկանց, պաշտպանում է անմեղ մարդկանց: Փաստաբանը շատ օրենքին նվիրված մարդ է, այդ թվում նաև իմ հայրը: Փաստաբանները շատ բարի մարդիք են:

* * * * *

Սարգսյան Արթուր, 9 տարեկան

Պաշտպանում է մարդկանց, նիստերի մասնակցում, գնում է դատարաններ, շատ է աշխատում, հետո հոգնած գալիս է տուն, հատկապես քույրս:

* * * * *

Խաչատրյան Հայկ, 13 տարեկան

Իմ կարծիքով փաստաբանները պաշտպանում են մարդկանց,որպեսզի նրանք լինեն ազատության մեջ:

* * * * *

Մարտիրոսյան Մակիչ, 11 տարեկան

Փաստաբանը իրականացնում է այն ամեն ինչը, որը չի կարող իրակնացնել ուրիշ մասնագիտություն ունեցող մարդը՝ այսինքն պաշտպանում մեղադրյալի շահերը,արդարություն է վերականգնում, խոչընդոտում է շինծու արարքները: Անում է այն ինչ պետք է հասարակությանը:

* * * * *

Առուստամյան Սիլվա-Մարիա, 11տարեկան
Փաստաբանը պաշտպանում է մարդկանց: Ես ուզում եմ դառնամ փաստաբան:

* * * * *

Մարգարյան Սիլվա
Փաստաբանը օգնում է բոլորին:

* * * * *

Գրիգորյան Էլեն, 10 տարեկան
Ծնողներս փաստաբան չեն, սակայն ես շատ եմ ուզում, որ մեր փաստաբանները ուժեղ լինեն և կարողանան ամբողջ աշխարհում հաղթեն թուրքերին հայոց եղեռնի ճանաչման հարցում:

* * * * *

Պետրոսյան Անի, 11 տարեկան
Փաստաբանը պաշտպանում է մարդկանց: Ես չեմ ուզում դառնալ փաստաբան, քանի որ դա անհետաքրքիր և անիմաստ բան է:

* * * * *

Դավթյան Անի, 10 տարեկան
Փաստաբանը մարդկանց իրավունքներն է պաշտպանում: Նա խորհուրդ է տալիս մարդկանց և ասում, որ պետք է լինել խելացի և մեկը մյուսին հարգող: Ես նույն պես ուզում եմ լինել փաստաբան և պաշտպանել մարդկանց իրավունքները:

* * * * *

Մարգարյան Ստելլա, 9 տարեկան
Փաստաբանը օգնում է բոլորին:

* * * * *

Սոնա Բոյաջյան, 9 տարեկան
Փաստաբանը նա է, ով արդար է, լավ մարդ, պաշտպանում է մարդկանց իրավունքները:

* * * * *

Սիմոնյան Անահիտ, 9 տարեկան
Փաստաբանը այն անձն է, ով պաշտպանում է բոլորին: Իմ հայրիկը փաստաբան է: Ես լավ եմ սովորում և երբ մեծանամ որոշել եմ դարնալ փաստաբան և պաշտպանել բոլոր մարդկանց:

* * * * *

Դավթյան Մարիա, 12 տարեկան

Իմ կարծիքով փաստաբանը այն մարդն է, որը պաշտպանում է սովորական քաղաքացու շահերը և իրավունքները դատարանում: Փաստաբանի աշխատանքը շատ դժվար է: Նրանք շատ դժվար են վաստակում իրենք փողը: Իմ մայրիկը շատ դժվար է վաստակում իր գումարը: Միշտ երբ աշխատանքից տուն է վերադառնում, շատ հոգնած է լինում:

* * * * *

Պապոյան Թեհմինե, 14 տարեկան

Իմ կարծիքով փաստաբանի մասնագիտությունը կարևորագույններից է մեր երկրում: Փաստաբանը մի անձ է, ով օգնում է հուսահատության մեջ ընկած մարդու, որը հանդիպել է անարդարությանը: Նա նման է հոգեբանի, ով խորհուրդներ է տալիս մարդում և օգնում դուրս գալ ծանր կացությունից: Փաստաբան երազում են դառնալ համարյա բոլոր իմ հասակակիցները, բայց նրանք չեն պատկերացնում, թե փաստաբանի մասնագիտությունը ինչպիսի պատասխանատվություն է ներկայացնում իրենից: Եվ վերջապես, եթե փաստաբան է իմ հայրը, ուրեմն այս աշխատանքը աշխարհում ամենալավն է:

* * * * *